

## Հոդվածների կանչ

**ԷԹԻԿԱ. Բարոյագիտության և հանրային հարցերի տարեգրքի** (ETICA: Yearbook of Ethics & Public Affairs) 2-րդ համարը կիրատարակվի **2026 թվականի սեպտեմբերին** և նվիրված կլինի **ազգային ինքնությունը ճգնաժամի ժամանակ** թեմային: Հոդվածները կարող են վերաբերել ազգային ինքնությանն առնչվող ցանկացած հարցի, այդ թվում.

- Ազգային ինքնության նարատիվներ. կոնստրուկտ, թե՞ մշակութային անսասան ժառանգություն
- Ազգային ինքնության տարբերակիչ հատկանիշներ. լեզու, ընդհանուր պատմություն, կրոն, արվեստ, ճարտարապետություն, մշակութային այլ խորհրանիշներ
- Ընդհանուր և վիճարկվող ազգային ինքնություններ
- Ազգային ինքնության քաղաքականություն. քաղաքական համատեքստում ազգային ինքնության կիրառություն և չարաշահում
- Ազգային ինքնության էթիկա. իրավունքներ, պատասխանատվություն և բարոյական պարտականություններ
- Ազգային ինքնություններն աշխարհի տարբեր կողմերում
- Ինքնություններն ազգային սահմաններից դուրս, և միգրացիայի ազդեցությունն ինքնության վրա
- Բազմամշակութայնություն եւ ազգային ինքնություն

### Ինչպե՞ս ներկայացնել հոդվածները:

- Հոդվածները կարող են լինել **հայերեն** կամ **անգլերեն**:
- Յուրաքանչյուր հոդված պետք է ունենա մոտ **300 բառանոց ամփոփագիր**, ինչպես նաև **5–6 բանալի բառ**:
- Հոդվածների ծավալը պետք է լինի **8,000 – 10,000 բառ**՝ ներառյալ ծանոթագրություններն ու գրականության ցանկը:
- Հոդվածները պետք է պատրաստված լինեն **կրկնակի կույր գրախոսման** համար: Հոդվածի տեքստը, ինչպես նաև այն պարունակող փաստաթղթի մետատվյալները հեղինակին/հեղինակներին նույնականացնելու հնարավորություն տվող որևէ տվյալ չպետք է պարունակեն: Հեղինակի/հեղինակների վերաբերյալ տվյալները խնդրում ենք փոխանցել հոդվածի վերնագիրը, հեղինակի/ հեղինակների անուն(ներ)ը, գիտական հաստատություն(ներ)ը և կոնտակտային տվյալները պարունակող առանձին փաստաթղթով:
- Հայերեն հոդվածները պետք է շարադրված լինեն GHEA Grapalat, իսկ անգլերեն հոդվածները՝ Times New Roman տառատեսակով, 12 չափսով և երկտող միջտողային հեռավորությամբ:
- Մեջբերման ձևաչափ՝ APA (հեղինակ/տարեթիվ): Ձևաչափին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):
- Հոդվածները պետք է ուղարել խմբագիրներին՝ Word կամ նման խմբագրվող ձևաչափով (բայց ոչ PDF ձևաչափով):
- Մեկից ավելի հեղինակ ունեցող հոդվածների դեպքում բոլոր հեղինակների տվյալները պետք է ներառված լինեն նամակում, իսկ հոդվածը պետք է ուղարկի հիմնական (հետադարձ կապի համար պատասխանատու) հեղինակը:
- Հոդվածները ներկայացնելու վերջնաժամկետը **2025 թ. դեկտեմբերի 15-ն** է:

Խնդրում ենք բոլոր հարցերն ու հոդվածներն ուղարկել [ETICA@aua.am](mailto:ETICA@aua.am) էլեկտրոնային փոստին՝ թեմայի դաշտում նշելով **YEARBOOK**: